ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/37

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.04.2018թ. թիվ 03/26-3/6693-18 գրությամբ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 05.04.2018թ. գրության հիման վրա, 11.04.2018թ. Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ը 05.04.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ուսումնասիրության նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար Ձեզ ենք տրամադրում ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով հայտարարված ընթացակարգը չկայացած համարվելու հիմքերի և հայտ ներկայացրած մասնակցի՝ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանի կողմից ներկայացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Կառլեն Ռուստամյանը:

3. Ա/Ձ Գևորգ Եդիգարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.04.2018թ. թիվ 03/26-3/6693-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ա/Ձ-ի դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինս չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2018թ. թիվ 03/26-3/6693-18 գրությունը, ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 05.04.2018թ գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝

նաև Հրավեր), «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.02.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 և 28.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները.

ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ բնահողի և գրունտի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը:

Հանձնաժողովը 28.02.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է, որ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանի կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 7.1 կետով որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին:

Հանձնաժողովը 28.03.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին ծանուցվել էր, որ «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-2-րդ չափաբաժիններում ընտրված մասնակից (հաղթող) է ճանաչվել Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝ ներկայացվել էր ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ բնահողի և գրունտի ձեռքբերման՝ «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը, որը կարող էր կնքվել ընթացակարգի հրավերում նշված պահանջներին համապատասխան պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տաս աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի գնի տասը տոկոսի չափով պայմանագրի ապահովում և իր կողմից ստորագրված պայմանագիրը ներկայացնելուց հետո, սակայն Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը համապատասխան ժամկետում չի ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը և զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ը 14.03.2018թ. պայմանագիր կնքելու մասին ծանուցմամբ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին հայտնել է հետևյալը.

««ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-2-րդ չափաբաժիններում ընտրված մասնակից (հաղթող) է ճանաչվել Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝ կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Աշտարակի քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ բնահողի և գրունտի ձեռքբերման՝ «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը, որը Ձեր հետ կարող է կնքվել ընթացակարգի հրավերում նշված պահանջներին համապատասխան պայմանագրի գնի տասը տոկոսի չափով պայմանագրի ապահովում ներկայացնելուց հետո:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:
- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՀՈՂ-18» ծածկագրով հրավերի՝

- 9.2 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:
- 9.4 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա

ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանը՝ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելով և պայմանագրի ապահովումը պատվիրատուին չներկայացնելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2018թ. թիվ 03/26-3/6693-18 գրությամբ Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Ա/Ձ Գևորգ Եդիգարյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**